ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2304-Ա «09» հունիսի 2025 թ.

ՀԱՂԹԱՆԱԿԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.19/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ 1-ԻՆ ՀԱՐԿԻ 17.55ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՐ ԿՆՔՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք են հանդիսացել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության հ.Ն/20759-25 զեկուցագիրը և «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» ՓԲ ընկերության հ.381 գրությունը՝ Հաղթանակի 6-րդ փողոցի հ.19/1 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի 17.55քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի համար կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին:

Հաղթանակի 6-րդ փողոցի հ.19/1 հասցեում գտնվող շենքը՝ սեփականության իրավունքով պատկանում է Երևան համայնքին /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 12.04.2013թ. հ.12042013-01-0015 վկայական/:

Երևանի քաղաքապետի 2015 թվականի օգոստոսի 5-ի հ.2423-Ա որոշման հիման վրա Հաղթանակի 6-րդ փողոցի հ.19/1 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի 17.55քմ մակերեսով ոչ բնակելի տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրվել է «Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը, որի համար 2015 թվականի սեպտեմբերի 8-ին կնքվել է գույքի անհատույց օգտագործման հ.3660 պայմանագիրը, որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.17092015-01-0104 /գաղտնաբառ՝ MHAI2QZ3QU3U/ վկայական:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, 441-րդ, 466-րդ, 468-րդ հոդվածներով, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշմամբ, հաշվի առնելով 2015 թվականի սեպտեմբերի 8-ի գույքի անհատույց օգտագործման հ.3660 պայմանագիրը.

1.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին, Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» ՓԲ ընկերության հետ կնքել համաձայնագիր՝ Հաղթանակի 6-րդ փողոցի հ.19/1 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի 17.55քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի համար 2015 թվականի սեպտեմբերի 8-ին կնքված գույքի անհատույց օգտագործման հ.3660 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին, ներառելով հետևյալ փոփոխությունները.

1) պայմանագրի 1.2 ենթակետում «10 (տաս) տարի» բառերը փոխարինել «մինչև 2030 թվականի սեպտեմբերի 1-ը» բառերով.

2) պայմանագրում՝ «Թիվ 19 պոլիկլինիկա» բառերը փոխարինել «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» բառերով:

2.Ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման 1-ին կետով նշված համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում.

2) պետական գրանցման, միասնական տեղեկանքի և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» ՓԲ ընկերության կողմից:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Շ. Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ